

ՆՈՐԻՑ ՄԽԻԲԱՐ ԳՈՇԻ ՄԱՍԻՆ

ԷՄ. Ա. ՊԵՂԱՋԱՆ

Վերջին մի քանի տասնամյակներում ադրբեջանական որոշ գրականագետներ, մանավանդ պատմաբաններ, համառ ու եռանդուն փորձեր են անում աղվան-ադրբեջանցի համարելու միջնադարյան հայ մշակույթի ու գրականության մի շարք ականավոր մատենագիրներին, իսկ նրանց ստեղծագործությունները՝ աղվանական գրականության հուշարձաններ։ Դեռևս 1930-ական թվականներին ադրբեջանական բանաստեղծ ու գրականագետ Ռաֆիլին հայ միջնադարյան առաջին աշխարհիկ պոեմի հեղինակ Դավթակ Քերթոկին հայտարարեց աղվան բանաստեղծ, Դավթակի «մեղքն» այն էր, որ Աղվանքի մայրաքաղաք Պարտավում էր եղել նրանց իշխան Զիվանշիրի սպանության ժամանակ և այդ առթիվ մի ողբ էր գրել իր մայրենի լեզվով՝ հայերենով, հայերենի այբուբենի ակրոստիքոսով, ինչ որ բացարձակապես անհնար կլիներ, եթե այն լիներ գրված աղվաններին և թարգմանված հայերեն։ Հետագայում աղվան հայտարարված հայ մատենագիրների թիվը գնալով մեծացավ, չեղած աղվանական գրականության ներկայացուցիչներ հայտարարվեցին ոչ միայն Մովսես Կաղանկատվացին, որի երկում է պահպանված Դավթակի ողբ-պոեմը, այլև Մխիթար Գոշը, Վանական վարդապետը, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ։ 1965 թ. հրատարակված «Ադրբեջանը VII—IX դարերում» աշխատության մեջ Զիա Բունիյաթովը գրում է. «Մխիթարի «Դատաստանագիրքը», Կիրակոս Գանձակեցու «Պատմությունը», ինչպես և միջնադարյան Առանի պատմության վերաբերյալ շատ ուրիշ աղբյուրներ զգալի չափով պետք է համարել աղվանական գրականության հուշարձաններ՝ դրված գրաբարով։ Եվ միայն Ադրբեջանում Առանի (Աղվանքի) քրիստոնեական շրջանի պատմության հետազոտողների բացակայությունն է հնարավորություն տվել այդ գրականությունը համարելու հայկական, թեև դրա համար որևէ հիմք, բացի լեզվից՝ չկա»¹։ Եվ ահա հայտնվել են Աղվանքի պատմության քրիստոնեական շրջանի պատմության ադրբեջանցի հետազոտողներ՝ Ի դեմս Զ. Բունիյաթովի ու Ֆ. Մամեդովայի և սեփականը չգտնելով՝ հայ գրականության հուշարձանները յուրացնում են, դրանք համարելով աղվանական։ Զ. Բունիյաթովի գրքի հակագիտական դրույթների ու կեղծիքների, այդ թվում հայ մատենագրության արդյունքներն աղվանական համարելու փորձերը, նրա նկրտումների դեմ դեռևս այն ժամանակ հանդես եկան՝ Ա. Շ. Մնացականյանը², Պարույր Սևակը³ և ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանը⁴։ Բայց կարծես ոչինչ չի պատահել. Զ. Բունիյաթովը, ինչպես և Ադրբեջանի պատմաբաններից ուրիշներ, շանսավով գիտական ճշմարտության ձուլին, շարունակում են իրենց բռնած գիծը՝ հայկական միջնադարյան մատենագրական երկերը, մշակույթի այլ հուշարձաններ սեփականելու անվայել վարքագիծը։ 1986 թ. լույս է տեսել Ֆ. Մամեդովայի «Կովկասյան Աղվանքի քաղաքական պատմությունը և պատմական աշխարհագրությունը (մ. թ. ա. III դարից մինչև մ. թ. VIII դարը)» հավակնոտ խորագիրը կրող գիրքը, որի

¹ 3. Буниятов, Азербайджан в VII—IX вв., Баку, 1965, с. 99.

² Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, նույնը սուրբ են՝ О литературе Кавказской Албании, Ереван, 1969.

³ Асатур Мнацаканян, Паруйр Севак, По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII—IX вв.». (Պատմա-բանասիրական հանգես, 1967, № 1).

⁴ К. А. Мелик-Оганджанян, Историко-литературная концепция З. Буниятова (Բանբեր Հայաստանի արխիվներ, 1968, № 2):

հեղինակը նպատակ է դրել, ինչպես նշում է ներածության մեջ, ուշադրություն բերել մ. թ. ա. III-դ. մինչև մ. թ. VIII դ. ներառյալ Աղվանքի պատմության՝ պատմական, աշխարհագրության, քաղաքական կառուցվածքի, քաղաքական պատմության, գաղափարախոսության հանգուցային հարցերի վրա։ Այստեղ չենք գրախոսելու Ֆ. Մամեդովայի այդ տխրահռչակ դիրքը կամ ցույց տալու Աղվանքի քաղաքական պատմության ու պատմական աշխարհագրության և այլ «հանգուցային հարցերի» նրա նենգափոխումներն ու միտումնավոր աղավաղումները՝ կապված հայ ժողովրդի պատմության, Հայաստանի պատմական աշխարհագրության և այլնի հետ. այդ խեղաթյուրումներին հանգամանորեն անդրադարձել են Բ. Հարությունյանը, Ա. Հակոբյանը, Պ. Մուրադյանն ու Կ. Յուզբաշյանը ՀԽՍՀ ԳԱ գիտական պարբերականներում տպագրած իրենց հոդվածներում⁵։ Մեր նպատակն է սոսկ ցույց տալ Զ. Բունիյաթովի, Ֆ. Մամեդովայի և մյուսների կեղծարարությունը Մխիթար Գոշի և նրա ստեղծագործության նկատմամբ։ Ֆ. Մամեդովան գրքում կրկնում է իր նախորդի ու ուսուցչի՝ Զ. Բունիյաթովի կարծիքները (ներառյալ կեղծիքները) ու դրույթները, այս անգամ արդեն իբրև գիտության մեջ հաստատված և ընդունված փաստ։ Եթե, օրինակ, Զ. Բունիյաթովը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոցը» և «Հատուրիշ աղբյուրներ»-ը որոշ վերապահությամբ՝ «գալի չափով» էր համարում աղվանական գրականության հուշարձաններ, ապա Ֆ. Մամեդովան ավելի մեծ ախորժակ ունի և թոթովելով իր ուսուցչի մտքերը, է՛լ ավելի հեռուն է գնում ու «գարգաշնում» դրանք։ Նա արդեն այդ հուշարձաններն ուղղակի աղվանական է համարում. առանց դուլզն ինչ վերապահության, գրելով՝ «Տեղական աղվանական գրականության հուշարձանների թվին են պատկանում Մխիթար Գոշի աշխատությունները։ Աղվանական մշակույթի ակնավոր գործիչ Մխիթար Գոշը եղել է հեղինակը մեծ թվով առակների, նշանավոր «Դատաստանագրքի», «Աղվանական ժամանակագրության» և մի վկայաբանության⁶ (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—էմ. Պ.)։ Մի այլ տեղ՝ «Աղվանական իրավագիտության մեծ նշանակություն ունեցող հուշարձան է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (էջ 22)։ Այս հայ հեղինակների հայերենով գրված գործերը համարվում են գլուխգործոցներ (էջ 28), բայց... աղվանական գրականության, մի գրականություն, որն ընդհանրապես գոյություն չի ունեցել. հայտնի է միայն աղվանական այբուբենը՝ հայերեն մի ձևագրում։ Այժմ ին՝ աղվանական գրականության ներկայացուցիչներ են համարվում XII—XIII դդ. հայ մատենագիրներն ու մշակույթի գործիչներն այն դեպքում, երբ այդ դարերում աղվաններն այլևս գոյություն չունեին։ Բանն այն է, որ, ասենք Զ. Բունիյաթովի բառերով, Ադրբեջանում «Աղվանքի քրիստոնեական շրջանի պատմության հետազոտողները», որ առաջ ճշակալում էին, իսկ այժմ հայտնվել են, չեն խափում պատմական ու մատեն-

⁵ Б. А. Арутюнян, «Когда отсутствует научная добросовестность» (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, № 7); А. А. Акопян, П. М. Мурадян, К. Н. Юзбашян, К изучению истории Кавказской Албании (по поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании» (III в. до н. э.—VIII в. н. э.)), (Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 3).

⁶ Фарид Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 21 (այսուհետև՝ միայն էջերը տեքստում)։

⁷ Մ. Արեղյանը իր «Հայոց հին գրականության պատմության» մեջ այդ մասին խոսելիս դրել է հետևյալ ծանոթագրությունը. «Աղվանք» կոչվում էր Հայոց աշխարհի մի մասը։ Դավիթ Անհողին թագավորը պատվիրում է Աղվանից կաթողիկոսին, թե՛ «Ժողովեա զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ, որ յԱղուանս են»։ «Տէր Բարսեղ յարուցեալ զնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի՝ ի լոռէ քաղաք առ թագաւորն հայոց Կիրիկէ՛ որդի Անհողինին Դաւթի» (Մ. Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, էջ 80 և հտ.։), Մ. Արեղյան, Երկեր, հ. 7, Երևան, 1970, էջ 171։

նագիտական փաստերը շուտ տված ներկայացնելուց, աղավաղելուց ու կեղծելուց:

Նախ մի երկու խոսք այն մասին, թե ինչ և ինչպիսի հիմունքներով է աշխատում Ֆ. Մամեդովան «ապացուցել», որ Մխիթար Գոշն իր «Դատաստանագիրքը» ստեղծել է «միայն աղվանների համար» (էջ 24): Որո՞նք են դրա համար նրա բերած ապացույցները:

Ա) Մխիթարը «Դատաստանագիրքի» նախադրության 11-րդ «Յիշատակարան սակաւութ» գլխում հայտնում է, թե երբ է սկսել պատրաստել իր օրենագիրքը. «բայց ձեռնարկութիւն մեզ յայում իրողութիւն կղև ի թուականութեանս հայոց ՈԼԳ (=1184) և ի շրջանին երթալոյ ի բաց ՃԱ. որ կոչի Փոքո. իսկ հոռոմին ՆԵ՝Յ, Ֆ. Մամեդովան այս քաղվածքը բերում է ուսերեն թարգմանությունից. «Предприняли мы это дело в 633 году армянского летосчисления, вычтя цикл (532 года) будет 102 год по календарю, который называется (у нас) Малым календарем, а по греческому летосчислению—в 405 году (т. е. 1184 г.)...» էջ (24—25):

Ինչպես տեսնում ենք, Մխիթարի բնագրում փակագծում դրված «у нас» բառերը չկան. դրանք բնագիրը հասկանալի դարձնելու համար ավելացրել է օրինագրքի ուսերենի թարգմանիչ Ա. Պապովյանը: Եվ ահա, այս բառերը, որ բնագրային չեն, բավական են, որ Ֆ. Մամեդովան գրի. «Итак: у нас»—у албан существовал даже свой метод летосчисления в отличие от армянской эры—Малый календарь...» (էջ 25): Հասկանալի է, որ սա այլ բան չէ, քան կեղծիք. որտեղից իմացավ Ֆ. Մամեդովան, որ «у нас» նշանակում է «у албан». չէ որ «у нас» բառերը թարգմանիչն ավելացրել է «у армян» և ոչ «у албан» իմաստով. մի՞թե Ֆ. Մամեդովան «չի նկատել» խոսքի առարկա հատվածի վերաբերյալ նույն թարգմանիչի ծանոթագրությունը. «Армянским Малым календарем называется введенное армянским ученым монахом-вардапетом Ованесом Саркавагом новое летосчисление (начинается с 1084 г.), вызванное главным образом запутыванием дней церковных праздников, особенно Пасхи, праздник которой в некоторые годы не у всех христианских народов приходился в один и тот же день»⁸. Այսպիսով, ուրեմն, «Դատաստանագիրքի» ուսերենի թարգմանիչը քննվող հատվածում ավելացրել է «у нас» բառերը, դրանց տակ նկատի ունենալով Հայաստանը, բայց Ֆ. Մամեդովան այդ բառերը կարծելով (անգիտությամբ) կամ համարելով (գիտակցաբար) բնագրային՝ Մխիթարինը, հայտարարում է, թե այստեղ ասված է, որ աղվաններն ունեցել են թվագրության իրենց մեթոդը (եղանակը), ի տարբերություն հայկական թվագրության՝ Փոքր թվականի (էջ 25): Դրանով կույ տրվեց, աղվանական համարվեց հայոց Փոքր թվականը, և քանի որ Մխիթար Գոշն էլ իր գիրքի սկսելու ժամանակը նշում է նաև Փոքր թվականով, ուստի նա էլ աղվան է: Ինչպես երևում է, Ֆ. Մամեդովային պետք են հայ մատենագիրներին մշակույթի գործիչներին յուրացնելու, աղվանացնելու «փաստեր», և նա ահա այս եղանակով հորինում է այդպիսիք:

Այսպես. սարկավազադիր թվականը Փոքր կոչվել է ոչ թե ի տարբերություն հայոց թվագրության, այլ ի տարբերություն հայոց Մեծ թվականի. Փոքր Մեծի հակադրությունն է և ոչ թե հայոցի: Եթե տոմարի մասին Ֆ. Մամեդովան տարրական գիտելիքներ ունենար կամ ծանոթ լիներ տոմարական գրականությանը, գոնե կշիկներ իր գրածի համար: Օրինակ, նա պարտավոր կլիներ բացատրություն գտնել (իմա՞ հորինել), թե ինչու սարկավազադիր Փոքր տոմարը սկսվում է 1084 թվականից: Բանն այն է, որ հայոց Մեծ թվականը շարժական տոմար էր, որի հետևանքով եկեղեցական տոներին կատարման ժամանակի մեջ խառնաշփոթություն էր ստեղծվում. Հովհաննես Իմաստասերը՝ Սարկավազը, ստեղծեց անշարժ տոմար, որով՝ հարգավորվում է՛ն այդ տոների կատարման ժամանակները: Ուրեմն Սարկավազի առաջին նպա-

⁸ Մխիթարայ Գոշի Դատաստանագիրքը հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 69—70.

⁹ Армянский Судебник Мхитара Гоша, Ереван, 1951, с. 228, прим. 7.

տակը հայոց տոմարի բարեփոխումն էր, շարժական տոմարն անշարժի վերածելը: Մյուս կողմից՝ Սարկավագի ժամանակ վերջանում էին Անանիա Շիրակացու կազմած հայոց Մեծ թվականի տոմարական աղյուսակները, որ մեկ պարբերաշրջանի (532 տարվա) համար էին և վերջացան 1084 թվականին (552+532=1084), անհրաժեշտ էին նոր աղյուսակներ, որ և պատրաստեց Հովհաննես Սարկավագը՝ միաժամանակ հայոց շարժական տոմարը անշարժի վերածելով և տոմարական հաշիվները 1084 թվականից սկսելով: Ընդունենք, որ տոմարական հարցերը բարդ են և Ֆ. Մամեդովան կարող էր գուցե չհանել դրանցից, բայց չէ որ կան պատմական աղբյուրներ, որոնց, կարծում ենք, նա ծանոթ է և որոնց մեջ Փոֆր տոմարը հենց հայկական, հայաց էլ կոչված է: Դրանցից նախ հիշենք Կիրակոս Գանձակեցուն, որին ճշգրտորեն հայտնական շրջանի Աղվանքի պատմության աղբյուրների հետազոտողների համարում են աղվանական (իմա՝ աղբյուրական) պատմիչ: Մեր ասածը Ֆ. Մամեդովային և մյուսներին հասկանալի դարձնելու համար մի պահ որպես իրականություն ընդունենք նրանց այդ կեղծիքը: Բայց հենց այս «աղվան» պատմիչը գրում է. «Սոյնպէս և մեծիմաստն գիտութեամբ քան զյոյովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յովհաննէս, Սարկավագն կոչեցեալ, ի Հաղբատ: Սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ. սա դրազմաց փափագելն և ոչ ձեռնհաս, զհառաւառ և զանշարժ տոմարն կարգեաց հայոց փոխանակ շարժականի և անհաստատուն, աւար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ հայոց...»¹⁰: Եթե այս հաղորդումը բավական չէ, որ Ֆ. Մամեդովան ընդունի իր ասածի անհեթեթությունը, բերենք նաև Սարկավագի ասածը. լուսնի լրման և խավարման մասին աշխատության մեջ նա արեգակի խավարումներից մեկի վերաբերյալ գրում է. «Յայսմ խաւարման արեգականն՝ էր թուական հոռմայեցոց փոքրն ՅԼԳ (333), և հայոցն հռնայէս Փոֆրն ԻԹ (29), յերկրորդ ժամուն, ի քսաներորդ մարտի, աւուրն չորեքշաբթոյ ի սուրբ քառասուններորդաց, ի հինգերորդ շաբաթին խաւարեցաւ արեգակն»¹¹:

Բ) Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» աղվանական իրավագիտության մեծ նշանակություն ունեցող» (էջ 22) հուշարձան համարելու Ֆ. Մամեդովայի մյուս «ապացույցն» այն է, որ Զ. Բունիյաթովն ասել է, թե իբր «Դատաստանագիրք» աղբյուրներ են հանդիսացել «Արևելահոռմեական կայսրության օրենքները, մովսիսական օրենքները, ինչպես և աղվանական եկեղեցական կանոնները» (էջ 22—23): Մենք մանրակրկիտ ուսումնասիրել ենք «Դատաստանագիրք» աղբյուրները¹² և ցույց տվել, որ իրականում այդպիսիք եղել են հայ սովորական, ավանդական իրավունքը, դատական պրակտիկան, մովսիսական իրավունքը, Հայոց կանոնագիրքը, Դավիթ Ալավկա որդու կանոնական օրենագրությունները, հայ մատենագրության տվյալները, որոնք և նյութապես առկա են «Դատաստանագրքում», իսկ Արևելահոռմեական կայսրության օրենքները և աղվանական կանոնները «Դատաստանագրքի» համար աղբյուրներ չեն ծառայել, Մխիթարը դրանցից չի օգտվել «Դատաստանագիրքը» կազմելիս. անհնար է բերել որևէ օրինակ, փաստ, որից երևար, թե «Դատաստանագրքում» օգտագործված են աղվանական կանոններ: Այնուամենայնիվ, դա Զ. Բունիյաթովին չի խանգարել գրելու այն սուտը, թե իբր «Դատաստանագիրք» ուսուներն թարգմանիչը «опустил значительную часть текста, который излагает албанские каноны»¹³: Բանն այն է, որ այդպիսի

¹⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Է. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 113: Նույն տեղս ուսուներն թարգմանությամբ՝ К и р а к с с Г а н д з а к е ц и, История Армении, М., 1976, с. 93, այն գիրքը, որ օգտագործել է Ֆ. Մամեդովան:

¹¹ Հովհաննես Իմաստասիրի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 278:

¹² Է. Ա. Ա. Պիվադյան, Մխիթար Գոշի Դատաստանագրքի աղբյուրների հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 4, էջ 80—98), նույնի՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի բանասիրական քննություն, Երևան, 1987, էջ 139—207:

¹³ З. Б у ч н я т о в, նշվ. աշխ., էջ 99, ծան. 121:

որն է կրճատում այստեղ գոյություն չունի: Այստեղ ևս, ուրեմն, Ֆ. Մամեդովան կեղծում է. նա Ջ. Բունիյաթովի և մյուսների նման՝ սոսկ հայտարարում է, իսկ դա ոչ գիտական փաստարկի արժեք կարող է ունենալ և ոչ էլ խոսում է ճշմարտության, իրականության նկատմամբ պատասխանատվության մասին. միայն թե այս դեպքում անպատասխանատվությունն ու միտումնավորությունը, դժբախտաբար, քրեական հետապնդման չեն ենթարկվում:

Գ) Մխիթարի «Դատաստանագիրքը» աղվանների համար ստեղծված և աղվանական գրականության հուշարձան համարելու Ֆ. Մամեդովայի «ապացույցները» մեկն էլ այն է, որ օրենսգրքի՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 1237 ձեռագիրն ունի հետևյալ հիշատակագրությունը. «Տէր աստուած վախելի տացէ աստուածասեր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ որդւոյ Հասանայ, ի կամս իւր ղգիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարիլ զպատուիրան սորին», այսինքն՝ ընծայագրով նվիրված է Վախտանգ իշխանաց իշխանին՝ այդ օրինագրքով ղեկավարվելու համար¹⁴: Բերելով այս հիշատակագրության ռուսերեն թարգմանությունը և այն որակելով որպէս արտակարգ կարևորություն ունեցող (էջ 29), Ֆ. Մամեդովան անհիմն հետևություն է անում, թե իբր օրենսգիրքը ստեղծված է Վախտանգ իշխանի պահանջով (ինչն անհնար է եզրակացնել հիշատակագրությունից) և քանի որ Վախտանգը խաչենի իշխանն էր, իսկ խաչենը մտնում էր Աղվանքը մեջ, ուստի «Դատաստանագիրքը» գրված է աղվանների (իմա՝ ադրբեջանցիների) համար: Գրչի մի հարվածով, ուրեմն, խաչենի (Աղվանքի) հայոց իշխանաց իշխան Վախտանգը (և նրա հայր Հասանը) դարձավ աղվան, օրենսգիրքն էլ նրա պահանջով աղվանների համար գրված:

Մի կողմ թողնենք տրամաբանական այս ձեռնածությունը, որը նկատի ունի անիրագրելի ընթերցողին և հիշենք, որ «Դատաստանագրքի» հենց այն ձեռագրում (և շատ ուրիշ ձեռագրերում), որն ունի վերևում բերված հիշատակագրությունը, օրենսգիրքը (նախադրության առաջին գլուխը) սկսվում է այս վերնագրով. «Գլուխ Ա. յորում կա պատասխանի այնոցիկ, որք բամբասեն լմեզ, եթէ չկայ դատաստան ի Հայք»: Եվ ահա նա գրում է իր օրենսգիրքը, թէ գրող դատաստանաւ վարիմք» (նախադրություն, էջ 12):

Անհեթեթություն կլիներ կարծել, թե հեղինակի գործածած մեզ-ը նշանակում է աղվանների, թե աղվաններից էին բամբասում Հայաստանում դատաստան չլինելու համար կարող էին բամբասել հայերին, և ոչ աղվաններին: Բերված փաստին Ֆ. Մամեդովան, որ ինչպես երևում է ձեռքը չի վերցրել «Դատաստանագրքի» բնագիրը (երկու հրատարակության գոյության դեպքում), պարտավոր էր գոնե ծանոթ լինել Ջ. Բունիյաթովի պատմագրական կոնցեպցիան մերկացնող՝ Կ. Մելիք-Օհանջանյանի վերը հիշված հոդվածին, որ գրված է ռուսերեն:

Այս (և նման այլ) փաստերի անտեսումը դժվար է բացատրել Ֆ. Մամեդովայի անգիտությամբ, դա բացատրելի է միայն նրա միտումնավորությամբ: Այսպես, փաստերն անտեսելով, խեղաթյուրելով ու նենգափոխելով, Ֆ. Մամեդովան դեռ համարձակվում է Մխիթար Գոշին հայ հեղինակ համարելու համար կշտամբել այնպիսի մի գիտնականի, որպիսին համբավավոր ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին է:

Ավելորդ ենք համարում այլևս խոսել գիտության հետ կապ չունեցող մյուս պնդումների, անհիմն ու անտրամաբանական դատողությունների մասին. միայն բերենք փաստեր, որոնք մերժում են Մխիթար Գոշի աղվան, իսկ նրա ստեղծագործությունները՝ աղվանական գրականության հուշարձաններ լինելու վերաբերյալ կեղծիքները: Նախ այն փաստերը, որոնք մատնացույց են արված «Աղվանքի քրիստոնեական շրջանի պատմության» ադրբեջանցի

¹⁴ Ընծայագիր-հիշատակագրության Մխիթար Գոշինը լինել-չլինելու մասին տե՛ս մեր «Մխիթար Գոշի Դատաստանագրքի բանասիրական քննություն» գրքում («Հնագույն ձեռագրերի հիշատակարանները» հատվածում):

հետազոտողներին, բայց, ահա, նրանք անտես են առնում դրանք¹⁵, կարծես, իրենց կեղծիքները չեն բացահայտվել և շարունակում են:

Ահա այդ փաստարկները.

1. «Դատաստանագրքի» Աշխարհական օրենք մասի հենց առաջին հոդվածում Մխիթարը գրում է. «մերն արքայ Աբգարիոս», պարզ հասկացնելով իր այն ազգից լինելը, որ ունեցել է Աբգար անունով թագավոր. խոսքը վերաբերում է Քրիստոսի հետ նամակագրություն ունեցող առասպելական Աբգար թագավորին, որի մասին պատմում է Մովսես Խորենացին: Արդ՝ ունեցե՞լ են աղվանները Աբգար թագավոր (իրական, թե ավանդական, առասպելական), որի մասին Գոշը գրե՞ր՝ «մերն արքայ»:

2. Մխիթարը «Դատաստանագրքի» հիշատակարանի մեջ, որ դրված է Նախագրության վերջում, գրել է. «Ապա թէ ընտանի ազգիս բառոյիւք սխալանացն լինիչիք պարսավիչ և ոչ ուղղիչ, գիտելով զորժ հայկազնեայցս զայդոսիկ. միանգամայն զչափ անձին, անմեղադիր ձեզ այդոցիկ լինիմք»: Այստեղ պարզիպարզո «Դատաստանագրքի» հեղինակը հայտնում է իր ազգությունը՝ ընտանի ազգիս՝ հայկազնեայցս՝ մեր հայերիս. բայց եթե մեր (հարազատ, սեփական) ազգի բնավորության (սովորության) համաձայն, պարսավեք ինձ սխալների համար և ոչ թե ուղղեք դրանք՝ իմանալով մեր՝ հայերիս (հայկազուններիս) այդ սովորությունը, չեմ մեղադրի ձեզ դրա համար:

3. «Դատաստանագրքի» առաջին՝ եկեղեցական կանոնք մասի ԿԾ (65-րդ) հոդված-կանոնը Ավագ Հինգշաբթի օրը պասը լուծելը արգելելու մասին է, որ կանոնադրվել է Գանգրայի և Նիկիայի ժողովներում: Այս կանոնին հետևել են հայերը, որի համար նախատվել են Ավագ Հինգշաբթի օրը պասը լուծելու սովորություն ունեցող հույներից ու վրացիներից: Այս առթիվ Մխիթար Գոշը, բերելով Գանգրայի ժողովի համապատասխան կանոնը, ավելացնում է. «Լուիցին Յոյնք և Վիրք զդատաստան կերողացն զօրն մեծ, զի ոչ Գանգրայն ժողովեալք և ոչ Նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազգաց, մանաւանդ Յունաց»: Հասկանալի է, որ իր եկեղեցու սովորությունը օրենսդրորեն այդպես ավյունով պաշտպանողը ազգով հայ հեղինակ է՝ ոչ թե աղվան:

Ինչպես ասացինք, այս փաստերը Մխիթար Գոշին աղվան ու աղվանական գրականության ներկայացուցիչ համարողներին մատնացույց են արված, բայց նրանք շարունակում են աչք փակել փաստերի առաջ: Գուցե այդ փաստերը քիչ են համարում. ավելացնենք, ուրեմն, դրանք:

Ողջ միջնադարյան գրականության մեջ իր բովանդակությամբ մի անգնահատելի վավերագիր է Մխիթար Գոշի Թուղթը՝ ուղղված վրաց արքունիքում մեծ դիրք գրավող հայազգի Զաքարե և Իվանե Զաքարյան եղբայրներին՝ «իշխանացն հայոց և վրաց», ինչպես գրում է Մխիթարը: Այս «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձվածողաց, ի խնդրոյ մեծ զօրաւարին Զաքարէի և եղբօր իւրոյ»¹⁶ խորագրով թղթի մեջ լայնախոհ հեղինակը վրաց պետության մեջ բացառիկ դիրք ու ազդեցություն ունեցող Զաքարյան եղբայրներին և վրաց կաթողիկոսին հորդորում է, որ նրանք աշխատեն մեղմել հայ և վրաց եկեղեցիների դավանական տարբերությունների հողի վրա եղած հակամարտությունների աղբեղությունը երկու ժողովուրդների քաղաքական համալեցութեամբ: Վրա: Թուղթը ժողովուրդ-

¹⁵ Տե՛ս 2, 3, 4-րդ ծանոթագրությունների մեջ նշված աշխատանքները: Հասկանալի է, թե ինչու և՛ նրանք այդ փաստերը անտեսում. չէ որ եթե անդրադառնային դրանց, անգամ փորձ անելով ժխտել, միևնույն է՝ ընթերցողին հայտնի կդառնային այդ փաստերը, և շատ պարզ կդառնար նրանց կեղծարարությունը. ուրեմն, համար են գտնում դրանց մասին առհասարակ լռել, թաքցնել:

¹⁶ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ճ ա կ ե Յ ի, էջ 221: Թղթի մասին տե՛ս Պ. Մուրադյանի «Դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարը ԺԳ դարի Հայաստանում» հոդվածը («Էջմիածին», 1987, ԺԱ-ԺԲ), ուր գիտնականը պարզել է Թղթի գրության ժամանակը, ճշգրիտ գնահատական տվել նրա բովանդակությանը:

Ներքին բարեկամության ու խաղաղ համակեցության մի կողմ է՝ երկու միակրոն ազգերի միջև հղած «զսաստկացեալ պատերազմի հայհոյութեան» շիջուցանելու և «խաղաղական կենսութեամբ» ապրելու հորդորով գրված: Այս Թուղթը Մխիթարը գրել է հայի պատվախնդրությամբ ու նախանձախնդրությամբ և բազմաթիվ անգամ շեշտում է իր հայ լինելը: Այսպես, հենց սկզբում նա գրում է, թե «...յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի հոգիս¹⁷, Եվ կամ՝ «...կարի յանդգնութիւն է մկրտել զհայ, կամ զյոյն և զվրացի... փոխանակ մկրտելոյ ընթեռնույ ի դարձելոցն Քաղկեդոնի, և որ զնոյն չափ ունի յայլոց ազգաց, զոր անգիտացեալ յոյնք և վիրք զպատրիարքս ի նոցանէ զհայ ոք մկրտեն և հայ ոք զնոսա» (էջ 497): Միանգամայն հասկանալի է, որ մեր ասելով Մխիթարը շեշտում է իր հայ լինելը: Նա բողոքում է հայերին (ոչ աղվաններին) հունադավան մկրտելու դեմ. նրա հոգին խոցվում է հայերն իրենց համար, և ոչ աղվանների. հայտնի փաստ է, որ եղել են դավանական ու ծիսական հակամարտություններ հայ և վրաց եկեղեցիների միջև. այստեղ խոսք չկա աղվանների մասին, և չէր էլ կարող լինել:

Թղթի հաջորդ հատվածում, որն ուղղված է վրաց կաթողիկոսին, Մխիթարը գրում է. «...համարձակեցաք և զսակաւ գրեցաք զթուղթդ, ոչ հակառակելով և կամ զոք պարսաւելով յազգաց... զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոցս ազգաց (հայերի և վրացիների—էմ. Պ.) և զխոտելի իրն ոչ թաքուցաք զմեր ազգիս, և զիրաքանչիւր ազգի զգովելին գրեցաք, և զզուրկ քանին ընտրեցաք զբարին և զլաւն... և դատիմ ի տեսունէ, թէ վասն հայոց երեսաց ես սուտ ինչ գրել եմ: Բայց կամ և խղճամ ընդ ձեր, զի անգիտութեամբ, որ չէ ոք զձեզ հասկացուցեալ՝ կայք և զքրիստոս զայրացուցանէք և զէնր ժողովորդդ ի գայթազեցանել եք ի հայք, թէ տաճիկն ու ջուհուտն լաւ է քան զհայն (նույն տեղում): Այսպես վշտանալով է նա գրում («...ոչ յանդգնութեամբ, այլ վշտանալով գրեցաք») իր ազգի՝ հայերի նկատմամբ հունադավանների վերաբերմունքի մասին: Շարունակության մեջ Մխիթարը հիշում է տիեզերական երեք ժողովները, որոնց որոշումներն ընդունելի են հայոց եկեղեցու համար և որոնց մասնակցել են հայերը. առաջինը Նիկիայի ժողովն է (325 թ.), որին մասնակցել է Լուսավորչի որդին՝ Արիստակեսը (Ռատակես), երկրորդը Կոստանդնուպոլսում 381 թ. Թեոդոս Մեծի գումարած ժողովն է, որտեղ հայ եկեղեցու ներկայացուցիչն էր Ներսես Մեծը, մյուսը Եփեսոսի ժողովն է (431 թ.), որին «Սահակ Հայաստանի միաբանի գրով»: Եվ վերջապես՝ չորրորդը Քաղկեդոնի ժողովն է, որին «հարքն մեր ոչ ընկալան և ոչ գնացին յայն ժողով» (էջ 501): Հասկանալի է, որ ինչպես ուրիշ տեղերում, այստեղ ևս մեր (հարքն մեր) նշանակում է հայերի: Այս Թղթի հեղինակը մեկ առ մեկ թվարկում է Հայաստանի ժողովները. «Կարգեցից և զժողովսն ի Հայք, թէ որպիսի պատճառաւ եղեն և վասն այդոցիկ «ամբաստանիմք ի յունաց և ի վրաց» (էջ 501): Մխիթարը գրում է, թե «ամբաստանիմք» (ամբաստանվում ենք) մենք՝ հայերս, Հայաստանի (եկեղեցական) ժողովների համար: Պարզից էլ պարզ է, որ հունադավաններից ամբաստանվողները Գոշի ժամանակ այլևս գոյություն չունեցող աղվանները չէին, այլ հայերը:

Գուցե այսքան փաստերն էլ բավական չեն. ավելացնենք:

Նշելով, որ միայն հայերը չեն, որ չեն ընդունել Քաղկեդոնի ժողովը, և թվարկելով այդ ժողովը չընդունող այլևայլ ժողովուրդների, Գոշը գրում է. «Եւ զայս կարճաբանելով ասացաք և առաւել վասն յունաց և վրաց, որ ամբաստանեն զմենք, թէ Հայաստանեայք միայն ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի» (էջ 503): Ուրեմն՝ Մխիթարը գրում է՝ ամբաստանում են մեզ, հայաստանցիներս, հայերիս: Ի՞նչ են կարծում Զ. Բունիյաթովն ու Ֆ. Մամեդովան՝ մեզ հայաստանցիներին, հայերիս ասողը հայ է, թե՞ աղվան:

¹⁷ Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչւիւր» (Արարատ, 1900, էջ 497), (այսուհետև միայն էջը՝ տեքստում):

Այսպես բազմիցս Մխիթարը գործածում է արտահայտություններ, որոնցից պարզորոշ է նրա հայ լինելը: Այնքան շատ են այսպիսի արտահայտությունները, որ թվում է, թե Մխիթարը 800 տարի առաջվա հեռվից ուղղակի պատասխանում է Զ. Բունիյաթովին, Ֆ. Մամեդովային և մյուսներին՝ շարունակ շեշտելով իր հայ, հայ եկեղեցու վարդապետ-գործիչ լինելը:

Դարձյալ շարունակենք քաղվածքներ բերել, ընդգծելով այն բառերը, որոնցից երևում է Մխիթարի՝ որ ազգի ներկայացուցիչ լինելը.

1. «Եւ դարձեալ մեր Լուսաւորիչն Գրիգորիոս զաւետեաց տաւնն առ ի խափանել զմոլորութիւն, զոր տաւնէին Անահիտ տիկնոջն, անդ ետ ի նաւասարդի ժն. զայն ի Զ ապրիլի, ըստ թուոց աւուրց և ոչ ի մարտի Ին...» (նույն տեղում, էջ 568):

2. «Եւ ի Պետրոսէ առաքելոյն հռովմեացւոց առեալ աւանդեաց ի հայս» (էջ 55—56):

3. «...Իսկ ամբաստանելն թէ զպառկեւս սրբոց ոչ ընդսնին հայք, և կառի սաւառել ընդունիմք, զի առաջին պարգևս ի Քրիստոսէ իւրն տուաւ պատկեր հայոց թագաւորին Արգաւռու» (էջ 60):

Ինչպես վերևում տեսանք, Գոշը «Դատաստանագրքում» էլ գրում է՝ «մերն արքայ Արգարիոս», ուրեմն՝ մերն = հայոց:

4. «Զի որ պատճառէ զմեռոն հայոց անկատար լինել, և վասն այն անպատուէ՝ յոյժ ստութիւն ունի» (էջ 59):

5. «...Եւ վասն առաջաւորաց պահոցն առաւել զայթազդին յոյնք և վիրք ի մեզ... անտեղեակ պատմութեանն. և այն առաջին պահք է, զոր կարգեալ է սուրբ Գրիգոր ի բժշկել Տրդատ թագաւոր, որպէս պատմէ Ագաթանգեղ այր հռոմեացի և ոչ հայ և Զննոր ասորի եպիսկոպոս, աշակերտ սրբոյն Գրիգորի՝ զնոյն գրէ յիւրում Պատմութեանն, և յաւելու ի պատմելն, թէ Եւ աւուր պահք Մեծին Կոստանդիանոսի կարգեցաւ ի բժշկել զնա, և վասն այն առաջաւոր անուանի, զի առաջին պահք այն եղև ի հայք...» (էջ 60):

6. «...Իսկ յոյնք և վիրք աշխատեն զքեզ խաչի՝ յոյժ անգիտաբար ապաստամբն, զի ասեն, թէ «զատառասածութիւն խաչել ասեմ հայք և վասն այն է բեռն: Զաստուած ասեմք խաչել՝ ոչ զԲանն, այլ զմարմին աստուածացեալ Բանին» (էջ 61):

7. «Մերն Իսահակ հայրապետն» (էջ 121) (նկատի ունի Մաշտոցի գործին աջակից Սահակ Պարթև կաթողիկոսին):

8. «...Եւ յետոյ հաւրքն մեռ վասն նեատորի աղանդին ժողովեալ ի Դուին և ի Մանգլիքեա եղին սահման...» (էջ 121):

Բոլոր ազգերն էլ ունեն խոտելի ու գովելի կողմեր, ասում է Մխիթար Գոշն իր «Թղթում» և եթե նրանցից չհրաքանչիւր զիւրն թողոյր զխոտելին և առնոյր զգովելին՝ լիներ միաբանութիւն ազգաց... Թէ զգլխաւոր իրս ուղղէին, մանրագունիցն լինէր հակառակութիւն» (էջ 122): Խոսելով ազգերի թերի կողմերի մասին, հեղինակն անցնում է գովելի կողմերին. «Այլ զի թերին ասացաք զամենայն ազգաց, և այժմ զգովելին ասացից. Յոյնք իմաստունք են և ողորմածք, ռուսալք ի Յոհանէ Ոսկեբերանէ. Հոռոմք զգաստ են աղաւթից և հնազանդ առաջնորդաց. ասորիք խոնարհք են և ճգնողք. Հայք պահողք են և ողորմած գերելոց և եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք սրբոց և վանորէից մեծարողք, և անբամբաս առաջնորդաց... լաւ էր, թէ զայն ընտէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց և բարեկամ լինէաք և զկարգ միմեանց չհայհոյէաք» (էջ 122): Ուրեմն՝ հինգ (քրիստոնյա) ազգեր՝ հույներ, հոռոմներ, ասորիներ, հայեր, վրացիներ, որոնք եթե չոչ կարեն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց լինել» (նույն տեղում): Աղվանները մեջտեղում չկան, և չէին էլ կարող լինել, որովհետև Մխիթարի ժամանակ աղվաններն այլևս գոյություն չունեին իբրև էթնիկական միավոր:

Ինչպես տեսնում ենք, XII դ. հայ մշակույթի ու գիտության ականավոր ներկայացուցիչ Մխիթար Գոշը ջատագովն է ազգերի համերաշխության ու խաղաղ համակեցութեան, մինչդեռ XX դ. հանդես եկան մարդիկ՝ բունիյաթովներ, ախունդովներ, մամեդովաներ, որոնք հայ մշակույթի, մատենագրության, լեզվաբանի, ճարտարապետության հուշարձանները, հայ մատենա-

գիրքներին ու գիտնականներին կեղծիքների միջոցով յուրացնելու, սեփականելու իրենց ոտնձգություններով հող նախապատրաստեցին Սումգայիթի և նրան հաջորդող ողորդությունների համար:

Ինչպես երևում է, մեր «ինտերնացիոնալիստ» հարևանների համար սեփականը ստեղծելն ավելի դժվար է, քան հարևաններին կողոպտելը, և նրանք գնացել են երկրորդ ճանապարհով՝ հասկանալի պատճառներով միջնադարում սեփականը շունենալով փորձում են յուրացնել հարևանների բարձր մշակույթն ու մշակույթի գործիչներին:

Ողջամիտ կլիներ հետևել Մխիթար Գոշի պատգամներին:

ЕЩЕ РАЗ О МХИТАРЕ ГОШЕ

Э. А. ПИВАЗЯН

Р е з ю м е

В последние десятилетия некоторые азербайджанские литературоведы, особенно историки пытаются причислить к албанам некоторых известных деятелей армянской средневековой литературы и культуры, а их произведения—к памятникам албанской литературы. Эта тенденция упорно продолжается, несмотря на разоблачение фальсификаций и лженаучных положений азербайджанских авторов в целом ряде аргументированных исследований и статей. Так например, З. Бунятов и Ф. Мамедова с помощью подтасовки фактов и фальсификации источников представляют Мхитара Гоша албаном, а его труды—памятниками албанской литературы. Однако многочисленные отрывки из трудов Гоша еще раз свидетельствуют о том, что их автор—армянин.

AGAIN ON MKHITAR GOSH

E. A. PIVAZIAN

S u m m a r y

Within the last few decades some Azerbaijani literary critics and historians are trying to adopt as Albans some renowned personalities of the Armenian Medieval literature and culture and their works as the relics of the Alban literature accordingly. This trend persists despite the denunciations of the fraudulent embezzlements and the alledged scientific statements by the Azerbaijani authors in a number of properly substantiated studies and papers. Thus, Z. Buniatov and F. Mamedova by diverting evidence and falsifying sources present Mkhitar Gosh as an Alban and his works as relics of the Alban literature. However, multiple excerpts from the works by Gosh most forcefully corroborate their authorship by an Armenian person.